ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2

20 ՄԱՐՏԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Նելլի Ալիխանյանը, Գագիկ Ասրյանը, Աննա Ավալյանը, Արարատ Մարտիրոսյանը, Էմանույել Ուզունյանը, Արտյոմ Պողոսյանը, Վահրամ Սուքիասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Միեր Պապյան, Վաղարշակ Գրիգորյան, Արթուր Թումանյան, Հասմիկ Գյոզալյան, Աստղիկ Մելքումյան, Վահրամ Զարգարյան, Քրիստինե Միրզոյան, Մելինե Պապյան, Օլյա Ավագյան

Նիստը վարում էր Բերդ համայնքի ղեկավար՝ Աստղիկ Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Մարտին Ապրեսյանը

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20 -Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

*1.Հաստատել Բերդ համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը.*

1)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Ա.Թումանյան/*

2)ՌՈԼԱՆԴ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Թումանյան/

3)ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ <<ԷԿՈ ԳԱՐԴԵՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ>> ՍՊԸ-ԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

4)11-054-0390-0057 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.40822 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

5)ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.10023 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

6)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.3663 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆ (ԿՈՐԻԶԱՎՈՐ) ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

7)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.3257 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆ (ՀՆԴԱՎՈՐ) ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

8)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՄԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

9)ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.00448 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

10)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՊԱՎԵԼ ԱԲԵԼԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

11)ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.00217 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ.Գրիգորյան/

12)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՎԱՐԴՈՒՇ ՍՏԵՓԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ.Գրիգորյան/*

13)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ԱՐԱՄ ՊԱՎԵԼԻ ՄԱՅԻԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ.Գրիգորյան/*

14)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-047-0237-0030 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,21852 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ.Գրիգորյան/*

15)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.01509 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՎՈՆ ՀԱՅԿԱԶԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ.Գրիգորյան/*

16)11-054-0390-0057 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.40822 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ, 0.20306 ՀԱ ԵՎ 0.20516 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ.Գրիգորյան/*

17)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00442 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ.Գրիգորյան/*

18)ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Մ. Պապյան/*

19)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Զեկ. Ա.Հակոբյան/*

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 285-Ա/

Լսեցին
*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)*

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի հարկերի գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը:

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, 8-րդ մասերի պահանջներով և <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>> 28.04.2012թ. ՀՀ օրենքով,

*Բերդ համայնքի ավագանին որոշում է՝*

*1.* ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան դիմած բնակիչների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի հարկերի գծով տրամադրել արտոնություններ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 286-Ա/

Լսեցին
*ՌՈԼԱՆԴ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի գ. Պառավաքար, 12 փող., 1-ին փակուղի, տուն 3 հասցեի նախկին բնակիչ հանգուցյալ Ռոլանդ Գերասիմի Մարգարյանի ընտանիքին հատկացնել 500,000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ օգնություն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 287-Ա/

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ <<ԷԿՈ ԳԱՐԴԵՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ>> ՍՊԸ-ԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

## Համայնքի ավագանին որոշում է՝

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Այգեձոր 19 փողոց, թիվ 5 պահեստ հասցեում գտնվող 98,1 ք.մ ընդհանուր մակերեսով արտաքին և 75,5 ք.մ մակերեսով ներքին չափերով պահեստները և պարիսպը՝ 105164/մեկ հարյուր հինգ հազար հարյուր վաթսունչորս/ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման համար 0,10713 հա մակերեսով հողամասը՝ 372531 /երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, որից՝ 294,3ք.մ մակերեսը՝ 41762/քառասունմեկ հազար յոթ հարյուր վաթսուներկու/ՀՀ դրամ, իսկ 777,0 ք.մ մակերեսը՝ 330769/երեք հարյուր երեսուն հազար յոթ հարյուր վաթսունինը/ՀՀ դրամ կադաստրային արժեքներով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ <<Էկո Գարդեն արտադրական կորպորացիա>> ՍՊԸ-ին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 288-Ա/

Լսեցին
*11-054-0390-0057 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.40822 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ և 30-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ 13.02.2024թ. N2/փ-77 դրական եզրակացությանը,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող, Պառավաքար գյուղի վարչական տարածքում գտնվող, 0.40822 հա մակերեսով՝ 11-054-0390-0057 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը, որպես բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի:

2.<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 289-Ա/

Լսեցին
*ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.10023 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում

ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Վերին Կարմիր Աղբյուր, 5փողոց, 7 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.10023 հա մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար:

2.Մեկնարկային գինը սահմանել՝260 000 /երկու հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 290-Ա/

Լսեցին

*ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.3663 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆ (ԿՈՐԻԶԱՎՈՐ) ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի, Չինարի գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկներ, պտղատու այգին (կորիզավոր)՝ 0.3663 հա մակերեսով, ծածկագիրը՝ 11-051-0005-0009, 25 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրելու, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

2.Սահմանել 0.3663 հա մակերեսով բազմամյա տնկարկներ, պտղատու այգու (կորիզավոր) տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 19000 /տասնինը հազար/ՀՀդրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 291-Ա/

Լսեցին
*ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.3257 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆ (ՀՆԴԱՎՈՐ) ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

**Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի, Այգեձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկներ, պտղատու այգին (հնդավոր)՝ 0.3257 հա մակերեսով, ծածկագիրը՝ 11-010-0380-0227, 25 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրելու, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

2.Սահմանել 0.3257 հա մակերեսով բազմամյա տնկարկներ, պտղատու այգու (հնդավոր) տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 7000 /յոթ հազար/ՀՀդրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 292-Ա/

Լսեցին
*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՄԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, Բերդ քաղաք, Մ. Մաշտոցի փողոց, 82/29 հասցեում գտնվող 25,9 ք.մ մակերեսով արտաքին չափերով և 20,17 ք.մ մակերեսով ներքին չափերով առևտրի սրահը՝ 389977/երեք հարյուր ութսունինը հազար ինը հարյուր յոթանասունյոթ/ՀՀ դրամ արժեքով և դրա պահպանման ու սպասարկման համար 0,00259հա մակերեսով հողամասը՝ 74787/յոթանասունչորս հազար յոթ հարյուր ութսունյոթ/ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Մարինե Ազատի Բաղդասարյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 293-Ա/

Լսեցին
*ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.00448 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Այգեձոր, 11 փողոց, 6 փակուղի, 1/2 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00448 հա մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար:

2.Մեկնարկային գինը սահմանել՝70 000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 294-Ա/

Լսեցին
*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՊԱՎԵԼ ԱԲԵԼԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, Բերդ քաղաք, Մ. Մաշտոցի փողոց, 14/32 հասցեում գտնվող 30,2 ք.մ մակերեսով արտաքին չափերով և 27,97 ք.մ մակերեսով ներքին չափերով ավտոտնակը՝ 50525/հիսուն հազար հինգ հարյուր քսանհինգ/ՀՀ դրամ արժեքով և դրա պահպանման ու սպասարկման համար 0,00302հա մակերեսով հողամասը՝ 87203/ութսունյոթ հազար երկու հարյուր երեք/ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Պավել Աբելի Զարգարյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 295-Ա/

Լսեցին
*ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.00217 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում,՝չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, քաղաք Բերդ, Մ. Խորենացու փողոց, 71/8 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00217 հա մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար:

2.Մեկնարկային գինը սահմանել՝120 000 /հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 296-Ա/

Լսեցին
*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՎԱՐԴՈՒՇ ՍՏԵՓԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, Բերդ քաղաք, Մ. Մաշտոցի փողոց, 26/2 հասցեում գտնվող 15.7 ք.մ մակերեսով արտաքին չափերով և 14.8 ք.մ մակերեսով ներքին

չափերով ավտոտնակը՝ 26267/քսանվեց հազար երկու հարյուր վաթսունյոթ/ՀՀ դրամ արժեքով և դրա պահպանման ու սպասարկման համար 0,00157 հա մակերեսով հողամասը՝ 45334/քառասունհինգ հազար երեք հարյուր երեսունչորս/ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Վարդուշ Ստեփանի Թումանյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 297-Ա/

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ԱՐԱՄ ՊԱՎԵԼԻ ՄԱՅԻԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, Բերդ քաղաք, Զորավար Անդրանիկի փողոց թիվ 16/1 փողոց, 26/2 հասցեում գտնվող 75,87ք.մ մակերեսով արտաքին չափերով և 72,0 ք.մ մակերեսով ներքին չափերով բնակելի տունը՝ 380792/երեք հարյուր ութսուն հազար յոթ հարյուր իննսունէրկու/ՀՀ դրամ արժեքով և դրա պահպանման ու սպասարկման համար 0,00432հա մակերեսով հողամասը՝ 124740/մեկ հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր քառասուն/ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Արամ Պավելի Մայիլյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 298-Ա/

Լսեցին
*ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-047-0237-0030 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,21852 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

**Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Ներքին Կարմիր Աղբյուր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 11-047-0237-0030 ծածկագրով, 0,21852 հա մակերեսով արոտավայր հողամասը:

2.Սահմանել 0,21852 հա մակերեսով արոտավայր հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 8800 /ութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 299-Ա/

Լսեցին
*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.01509 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՎՈՆ ՀԱՅԿԱԶԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Կառավարության 2001թ.ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ մասով և հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի

սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, Ներքին Կարմիր Աղբյուր գյուղ, 2-րդ փողոց, 2/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասերից 0.01509 հա մակերեսով հողամասը՝ գ. Ներքին Կարմիր Աղբյուր, 1 փողոց, 3 հասցեում գտնվող առևտրի սրահին սպասարկման տարածք տրամադրելու նպատակով, 40000/քառասուն հազար/ ՀՀ դրամ արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Լևոն Հայկազի Առաքելյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 300-Ա/

Լսեցին
*11-054-0390-0057 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.40822 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ, 0.20306 ՀԱ ԵՎ 0.20516 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով, որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, Պառավաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, 11-054-0390-0057 ծածկագրով, համայնքային

սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը բաժանել 2 մասի՝ 0.20306 հա մակերեսով և 0.20516 հա մակերեսով հողամասերի , աճուրդով օտարելու համար:

2. Մեկնարկային գին սահմանել 0.20306 հա մակերեսով հողամասի համար՝ 210 000 /երկու հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ, 0.20516 հա մակերեսով հողամասի համար՝ 210 000 / երկու հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 301-Ա/

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00442 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Կառավարության 2001թ.ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ մասով և հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, Այգեպար գյուղ, 1-ին փողոց, 1-ին փակուղի 3/4 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասերից 0.00442 հա մակերեսով հողամասը՝ Տավուշի մարզ, Բերդ համայնք, Այգեպար գյուղ, 1-ին փողոց, 1-ին փակուղի 3/5 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքին սպասարկման տարածք տրամադրելու նպատակով, 44000/քառասունչորս հազար/ ՀՀ դրամ արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Անդրանիկ Սերյոժայի Հովակիմյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 302-Ա/

Լսեցին

*ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՄՀԵՐ ՊԱՊՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածով, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Բերդ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Բերդ համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 303-Ա/

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 16:00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 304-Ա/

Ավագանու անդամներ

ՀԱՄԱՅԱԿ ԱԴԱՄՅԱՆ

ՍԵՎԱԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ԶՎԱՐԴ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԺԻՐԱՅՐ ՄԻՐԶՈՅԱՆ

ԱՐԱՄ ՆԻԳՈՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՊԱՊՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

*Բերդ համայնքի ղեկավար*

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Մարտին Ապրեսյանը